ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 24 հոկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Գյուլումյանի

Քննության առնելով Տիգրան Խաչատրյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Տիգրան Խաչատրյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվել, լրացվել և մուտքագրվել է 2018 թվականի հոկտեմբերի 9-ին)՝ խնդրելով. «Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 48-րդ հոդվածի, 149^{8}–րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, 149^{9}-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և/կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 60-րդ (1-4 մասեր) հոդվածներին, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) ինչպես վիճարկվող դրույթներով, այնպես էլ դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ դրույթներով չեն նախատեսվում դատավարության մասնակիցների միջև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի կողմից կայացվող որոշ-

ման չափանիշներ: Ավելին, վիճարկվող դրույթները չեն կարգավորում դատարանի կողմից այդպիսի որոշումը գրավոր կայացնելու պարտականություն և կարգ: Կողմերի միջև ապացուցման պարտականության բաշխման որոշումը կայացվում է բանավոր արձանագրային որոշմամբ, որի արդյունքում չի ապահովվում նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Դիմողը գտնում է, որ գործի քննության ընթացքում դատարանի կողմից ապացուցման ենթակա փաստերի և ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ որոշման անորոշությունը, վերջինիս պարզման նպատակով դրան անդրադառնալու անհնարինությունը, դատական ակտի բողոքարկման ժամանակ այդ որոշմանն անդրադառնալու և հղում կատարելու անհնարինությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանություններն արգելափակում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված իրավունքների իրացումը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի, այդ թվում՝ դատական ակտերի, նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ դատական կազմը գտնում է, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 48-րդ հոդվածի 3-5-րդ, 7-րդ և 8-րդ մասերի, 149[9]-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ

Հիշյալ դրույթները դիմողի նկատմամբ չեն կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, սահմանադրական վերոնշյալ դրույթին և դրա հիմքում ընկած սահմա-

նադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում նաև նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման պայմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ «....իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի....» բառակապակցությունում «կիրառում» եզրույթը չի վերաբերում դատական ակտերում նորմատիվ իրավական ակտի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես նորմատիվ իրավական ակտի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես նորմատիվ իրավական ակտի դրույթի «կիրառում»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման պայմանի բացակայությամբ պայմանավորված անհատական դիմում ներկայացրած անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Համանման իրավական դիրքորոշումներ արտահայտված են նաև Սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշմամբ և 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ:

3.2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ մասերի, 149^{8}–րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի վերաբերյալ

Հիշյալ դրույթների մասով դիմողը, ըստ էության, բարձրացնում է օրենսդրական բացի հարց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 149^{8} հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախնական դատական նիստն արձանագրվում է հիշյալ օրենսգրքի 22 գլխով սահմանված կարգով, որով սահմանվում է դատական նիստի արձանագրման ձևին, պարզ թղթային արձանագրության բովանդակությանը, արձանագրության վարմանը, ինչպես նաև պարզ գրավոր ձևով վարվող արձանագրության վերաբերյալ

դիտողությունների ներկայացման կարգին և իրավական հետևանքներին վերաբերող կանոնները: Մասնավորապես, օրենսդիրը հնարավորություն է տալիս դատավարության մասնակիցներին ծանոթանալու պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրությանը և մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը դիտողություններ ներկայացնելու այն կազմելու լրիվության կամ ճշտության վերաբերյալ: Ընդ որում՝ արձանագրության վերաբերյալ դիտողություններն ուսումնասիրում է արձանագրությունն ստորագրած նախագահող դատավորը դրանք ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում: Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին նախագահող դատավորը կայացնում է որոշում:

Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը չի նախատեսել ապացուցման պարտականության բաշխման մասին որոշման **գրավոր** ձև, այնուամենայնիվ, դատավարության մասնակիցներին տրվել է դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու, դրա վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու օրենսդրական հնարավորություն և դրա միջոցով նաև իրացնելու դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-917, ՍԴՈ-922, ՍԴՈ-933, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1154, ՍԴՈ-1255 որոշումներով անդրադարձել է իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասությանը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Զարգացնելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է (14.09.2010թ. ՍԴՈ-914 որոշում), որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարա-

գայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում առկա չէ Սահմանադրական դատարանի՝ վերոնշյալ որոշման մեջ ամրագրված որևէ պայման, որի առկայությամբ հնարավոր կլիներ դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացը քննության առնել Սահմանադրական դատարանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Տիգրան Խաչատրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

24 հոկտեմբերի 2018 թվականի
ՍԴԴԿՈ-3